



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1 մարտի 2022 թվականի

թիվ 28

քաղ. Մոսկվա

**««Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձեռով տեղեկատվության փոխանակման մասին» արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին»
2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության նախագծի մասին**

1. Հավանություն տալ ««Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձեռով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության նախագծին (կցվում է) եւ այն ուղարկել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ՝ ներպետական համաձայնեցում անցկացնելու համար:

2. Խնդրանքով դիմել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ մինչեւ 2022 թվականի ապրիլի 15-ը Եվրասիական տնտեսական հանձնաժողովին տեղեկացնել սույն կարգադրության 1-ին կետում

նշված Արձանագրության նախագծի ներպետական համաձայնեցում անցկացնելու արդյունքների մասին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա ընդունման օրվանից:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝

Մ. Մյասնիկովիչ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձեռով տեղեկատվության փոխանակման մասին»

2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ

փոփոխություններ կատարելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, Բելառուսի Հանրապետության հարկերի եւ գանձումների հարցերով նախարարությունը, Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական հարկային ծառայությունը եւ Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարությունը համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

«Անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև էլեկտրոնային ձեռով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ կատարել փոփոխություններ՝ հավելվածի համաձայն:

Հոդված 2

Սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր

ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Կատարված է _____ քաղաքում, 20__ թվականի _____-ի «____»-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն արձանագրության բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն արձանագրության ավանդապահ, սույն արձանագրության յուրաքանչյուր մասնակցի կուղարկի դրա հաստատված պատճենը:

**Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների
կոմիտեի կողմից՝**

**Բելառուսի Հանրապետության
հարկերի եւ գանձումների հարցերով
նախարարության կողմից՝**

**Ղազախստանի
Հանրապետության ֆինանսների
նախարարության կողմից՝**

**Ղրղզստանի Հանրապետության
ֆինանսների նախարարությանն առընթեր
պետական հարկային ծառայության կողմից՝**

**Ռուսաստանի Դաշնության
ֆինանսների նախարարության կողմից՝**

ՀԱՎԵԼՎԱԾ

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձեռով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձեռով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ կատարվող

1. 2-րդ հոդվածում՝

ա) երրորդ եւ չորրորդ պարբերությունները շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«հայտեր ներկայացնելու մասին կամ հայտի մեջ առկա տեղեկությունները ճշտելու վերաբերյալ հարցումները (այսուհետ՝ հարցումներ)՝ հարցումների ռեեստրների ձեռով,

հարցումների պատասխանները՝ հայտերի ռեեստրների ձեռով կամ ծանուցումների ռեեստրների ձեռով:».

բ) վեցերորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հայտերի ռեեստրների, հարցումների ռեեստրների եւ ծանուցումների ռեեստրների փոխանակումն իրականացվում է յուրաքանչյուր շաբաթ՝ շաբաթվա առաջին աշխատանքային օրը:»:

գ) ութերորդ պարբերությունում «օրվանից հետո 3 աշխատանքային օրվանից ոչ ուշ» բառերը փոխարինել «հետո հաջորդ աշխատանքային օրվանից ոչ ուշ» բառերով.

դ) իններորդ պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ պարբերությամբ՝

«Ձեռաչափատրամաբանական հսկողության հաղորդակարգի մեջ այն կազմելու ժամանակ առաջացած սխալների առկայության դեպքում հայտերի ռեեստրն ստացող հարկային մարմինը պարտավոր է վերացնել հաղորդակարգը կազմելու սխալները, կրկին կազմել ձեռաչափատրամաբանական հսկողության հաղորդակարգ եւ, նախքան հայտերի ռեեստրների հերթական փոխանակումն իրականացնելը, այն ուղարկել հայտերի ռեեստրի ուղարկող հարկային մարմին:»:

ե) տասներորդ պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ պարբերություններով՝

«Այն անդամ պետության հարկ վճարողի, որի տարածք ներմուծվել են ապրանքները, հաշվառման վերցնելու վայրով հարկային մարմնի կողմից հայտը հետ կանչելու հիմքեր են՝

ոչ պատշաճ որակի եւ (կամ) լրակազմության պատճառով այն բոլոր ապրանքների լրիվ վերադարձը, որոնց վերաբերյալ տեղեկությունները պարունակվում են ավելի վաղ ներկայացված հայտի մեջ,

հարկ վճարողի կողմից ապրանքի ներմուծման բացակայության այն փաստի սահմանումը հարկային մարմնի կողմից, որը պարունակվում է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 18 հավելված հանդիսացող՝ «Ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ

անուղղակի հարկերի գանձման կարգի եւ դրանց վճարման նկատմամբ հսկողության մեխանիզմի մասին» արձանագրության 20-րդ կետի 5-րդ ենթակետում նշված պայմանագրում:

2. Նշված արձանագրության 2-րդ հավելվածի 3-րդ կետում՝

ա) երեսունիններորդ պարբերության առաջին նախադասության մեջ

«20____ թվականի ____ -ի թիվ ____» բառերը փոխարինել «20____ թվականի _____ -ի թիվ ____՝ ապրանքների մասնակի վերադարձի հետ կապված» բառերով.

բ) երեսունիններորդ պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ պարբերությամբ՝

«Եթե ավելի վաղ ներկայացված հայտի փոխարեն հարկ վճարողի կողմից հայտ ներկայացնելը պայմանավորված է սույն կետի երեսունութերորդ եւ երեսունիններորդ պարբերություններում չնշված պատճառներով, ապա այդ հայտի աղյուսակում կատարվում է հետեւյալ գրառումը՝ «Ավելի վաղ ներկայացված եւ հարկային մարմնում գրանցված 20____ թվականի _____-ի թիվ _____ հայտի փոխարեն»: Ամսաթիվն ու համարը նշվում են հայտի 2-րդ բաժնից:»:

3. Լրացնել հետեւյալ բովանդակությամբ թիվ 3 հավելվածով՝

«Հավելված 3

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջեւ անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձեւով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության

ՊԱՀԱՆՋՆԵՐ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ վճարված անուղղակի հարկերի գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձեւով տեղեկատվության կազմին եւ կառուցվածքին ներկայացվող

1. Ընդհանուր դրույթներ.

Սույն փաստաթուղթը ներառում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների (այսուհետ՝ հարկային մարմիններ) միջեւ՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) բյուջեներ վճարված անուղղակի հարկերի գումարների վերաբերյալ տեղեկատվության փոխանցման նիշքերի ձեւաչափերի կազմի եւ կառուցվածքի նկարագրությունը: Էլեկտրոնային ձեւով տեղեկատվության փոխանակումն իրականացվում է կապուղիներով՝ տեղեկատվության պաշտպանության միջոցների օգտագործմամբ:

Ի կատարումն «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 72-րդ հոդվածի 3-րդ կետի՝ սահմանվում է տեղեկությունների փոխադարձ փոխանակման հետեւյալ կարգը՝

1.1. Հարկային մարմիններն անդամ պետությունների բյուջեներ վճարված անուղղակի հարկերի գումարների մասին տեղեկատվությամբ փոխանակվում են էլեկտրոնային ձեով:

1.2. Հարկային մարմինները փոխանակվում են xml-նիշքերի տեսքով տեղեկատվությամբ՝

ապրանքների ներմուծման եւ անուղղակի հարկերի վճարման մասին հայտերից (այսուհետ՝ հայտ) ու հայտերի հետկանչի մասին հիմնական տեղեկություններ պարունակող հայտերի ռեեստրների ձեւի մեջ (այսուհետ՝ հայտերի ռեեստրի նիշք)՝ անդամ պետությունների բյուջեներ վճարված անուղղակի հարկերի գումարների մասին: Ընդ որում, հայտերի հետկանչի մասին տեղեկություններ փոխանակելիս տեղեկությունները փոխանցվում են միայն այն հայտերի վերաբերյալ, որոնք նախկինում ընդունվել են տեղեկատվություն ստացող հարկային մարմնի կողմից (հայտը համարվում է ընդունված ձեւաչափատրամաբանական հսկողության սխալների բացակայության դեպքում):

հարցումների ռեեստրների ձեով (այսուհետ՝ հարցումների ռեեստր)՝ էլեկտրոնային ձեով հայտեր ներկայացնելու վերաբերյալ հարցումների մասին (այսուհետ՝ հարցում):

ծանուցումների ռեեստրների (այսուհետ՝ ծանուցումների ռեեստր) ձեով հարցումներին պատասխանների մասին:

ձեւաչափատրամաբանական հսկողության հաղորդակարգի (այսուհետ՝ ՁՏՀ հաղորդակարգ) ձեով՝ ձեւաչափատրամաբանական հսկողության սխալների մասին:

նույնականացման հաղորդակարգի ձեով նույնականացման սխալների մասին:

1.3. Հայտերի ռեեստրների նիշքերի ձեով հայտերով, հարցումների ռեեստրի ձեով հարցումներով, ծանուցումների ռեեստրի ձեով հարցումներին պատասխաններով տեղեկատվության փոխադարձ փոխանակումն

իրականացվում է հարկային մարմինների միջեւ՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջեւ անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձեռք տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում:

1.4. Հարկային մարմինները տեղեկատվության փոխադարձ փոխանակումն իրականացնում են սույն պահանջներին եւ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվության փոխանակման կարգը կանոնակարգող այլ ակտերին համապատասխան:

Հայտերի ռեեստրի նիշքն ստանալիս հարկային մարմնի կողմից կատարվում է ստացված տվյալների ձեւաչափատրամաբանական հսկողություն՝ սույն փաստաթղթի թիվ 15 հավելվածի համաձայն, եւ ձեւավորվում է ՁՏՀ հաղորդակարգ, որի ձեւաչափի նկարագրությունը բերված է սույն փաստաթղթի 6-րդ բաժնում:

ՁՏՀ հաղորդակարգը ձեւավորվում է ըստ հայտերի ռեեստրի յուրաքանչյուր նիշքի (այդ թվում՝ նիշքում սխալների բացակայության դեպքում):

Ձեւաչափատրամաբանական հսկողություն անցնելու ընթացքում սխալների բացակայության դեպքում կատարվում է ստացված տեղեկատվության ընդունում տեղեկատվական համակարգ:

Տվյալների նույնականացման ընթացքում հայտերում ձեւավորվում է նույնականացման հաղորդակարգ, որի ձեւաչափի նկարագրությունը բերված է սույն փաստաթղթի 7-րդ բաժնում:

Նույնականացման հաղորդակարգը ձեւավորվում է ըստ հայտերի ռեեստրի յուրաքանչյուր նիշքի (այդ թվում՝ նիշքում սխալների բացակայության դեպքում) եւ ուղարկվում է ուղարկող հարկային մարմին:

Եթե հայտերի ռեեստրի նիշքը պարունակում է միայն հայտերի հետկանչերի ռեեստր, ապա նույնականացման հաղորդակարգը կարող է չուղարկվել հարկային մարմին՝ հայտերի ռեեստրի նիշքն ուղարկողին:

1.5. ՁՏՀ հաղորդակարգեր ստանալուց եւ նույնականացնելուց հետո ուղարկող հարկային մարմինը միջոցներ է ձեռնարկում սխալները վերացնելու ուղղությամբ եւ ուղղված տեղեկատվությունն ուղարկում է ստացող հարկային մարմին՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջեւ անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձեւով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում:

1.6. Հարկային մարմինների միջեւ էլեկտրոնային ձեւով տեղեկատվության փոխադարձ փոխանակման դեպքում օգտագործվում են հետեւյալ միասնական դասակարգիչները եւ տեղեկագրքերը:

Աղյուսակ 1.6

Համարը՝ ը/կ	Տեղեկագրքի անվանումը	Տեղեկագրքի բովանդակությունը
1	ARSNI	Հայաստանի Հանրապետության հարկային տեսչությունների տեղեկագիրք
2	NGNI	Բելառուսի Հանրապետության ՀՀՆ տեսչությունների տեղեկագիրք
3	KZSNO	Ղազախստանի Հանրապետության հարկային մարմինների տեղեկագիրք
4	KGSNO	Ղրղզստանի Հանրապետության հարկային մարմինների տեղեկագիրք
5	SOUN	Ռուսաստանի Դաշնության հարկային մարմինների նշագրերի ծածկագրերի տեղեկագիրք՝ հարկ վճարողների հաշվառման նպատակների համար (ՀՀՆՏ)
6	OKSM	Աշխարհի երկրների համառուսական դասակարգիչ (ԱԵՀԴ)
7	PVD	Փաստաթղթի առաջացման պատճառների (ՓԱՊ) տեղեկագիրք
8	TNVED	Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգիչ (ԱՏԳ ԱԱ)
9	OKEI	Չափման միավորների համառուսական դասակարգիչ (ՉՄՀԴ)
10	OKV	Արժույթների համառուսական դասակարգիչ (ԱՀԴ)
11	SPOZ	Հայտերի հետկանչի պատճառների տեղեկագիրք (ՀՀՊՏ)

Հարկային մարմինները փոխանցում են հետեւյալ տեղեկագրերը՝

Համարը՝ ը/կ	Տեղեկագրի անվանումը	Տեղեկագրերի փոխանցման համար պատասխանատուն
1	ARSNİ	Հայաստանի Հանրապետության հարկային մարմին
2	NGNI	Բելառուսի Հանրապետության հարկային մարմին
3	KZSNO	Ղազախստանի Հանրապետության հարկային մարմին
4	KGSNO	Ղրղզստանի Հանրապետության հարկային մարմին
5	SOUN	Ռուսաստանի Դաշնության հարկային մարմին
6	OKSM	Ռուսաստանի Դաշնության հարկային մարմին
7	PVD	Փոխանցման ենթակա չէ
8	TNVED	Ռուսաստանի Դաշնության հարկային մարմին
9	OKEI	Ռուսաստանի Դաշնության հարկային մարմին
10	OKV	Ռուսաստանի Դաշնության հարկային մարմին
11	SPOZ	Փոխանցման ենթակա չէ

Տեղեկագրի մեջ փոփոխություններ կատարելու դեպքում հարկային մարմինները փոփոխությունները կատարելու օրվանից 10 օրից ոչ ուշ այն փոխանցում են ամբողջական թարմացված տեղեկագրի ձեւով:

Սույն փաստաթղթի 5-րդ բաժնում բերված են նշված տեղեկագրերի ձեւաչափերը եւ կառուցվածքը:

1.7. Էլեկտրոնային ձեւով տեղեկատվությունը ներկայացվում է XML ձեւաչափով նիշքերի ձեւով՝ UTF-8 ծածկագրմամբ:

1.8. Հաղորդագրության եւ դրա տարրերի շարահյուսությունը նկարագրելիս օգտագործվում է XML-փաստաթղթերի նկարագրության XSD ստանդարտը:

1.9. Նիշքերի ծառայողական եւ տեղեկատվական մասերի կազմի ու կառուցվածքի նկարագրությունը կատարվում է հետեւյալ աղյուսակային ձեւով:

Ատրիբուտի անվանումը	Տեսակը	Ձեռագրափը	Ատրիբուտի անվանումը	Ատրիբուտի կառուցվածքը եւ լրացուցիչ տեղեկատվությունը
---------------------	--------	-----------	---------------------	---

«Ատրիբուտի անվանումը» սյունակում նշվում է ատրիբուտի լրիվ անվանումը:

«Տեսակը» սյունակում նշվում է հետեւյալ պայմանանշաններից մեկը՝ Պ, ՈՊ Նշված պայմանանշաններն ունեն հետեւյալ իմաստը՝

Պ՝ պարտադիր տարր.

ՈՊ՝ ոչ պարտադիր տարր:

Պարտադիր տարրն այնպիսի տարր է, որի առկայությունը նիշքում պարտադիր է: Պարտադիր տարրի բացակայությունը նիշքի ձեռագրափի խախտում է:

Ոչ պարտադիր տարրն այնպիսի տարր է, որը կարող է ինչպես առկա լինել նիշքում, այնպես էլ բացակայել նիշքում:

«Ձեռագրափը» սյունակում յուրաքանչյուր տարրի համար նշվում է ձեռագրափի պայմանանշանը եւ կլոր փակագծերում՝ դրա արժեքի նվազագույն եւ առավելագույն երկարությունը:

Ձեռագրափի պայմանանշաններն ունեն հետեւյալ իմաստային նշանակությունները՝

T՝ տեքստային արժեք,

N՝ թվային արժեք,

D՝ ամսաթիվ,

B՝ տրամաբանական,

K՝ ծածկագիր:

Տեքստը պայմանանշանների ոչ դատարկ հաջորդականություն է, որպես պայմանանշաններ են օգտագործվում ռուսական, լատինական եւ այբուբենների

յուրահատուկ տառերը, թվանշանները, ինչպես նաև ցանկացած այլ պայմանանշան՝ բացառությամբ «գլանի վերադարձ» եւ «տողի ընդհատում» պայմանանշանների: Տեքստի առաջին պայմանանշանը պետք է տարբերվի բացատից:

Թիվը բաղկացած է թվանշաններից (այդ թվում նաև զրոներով սկսվող), ընդ որում՝ կարող է ներառել տասնորդական կետը եւ «-» (մինուս) նշանը՝ բացասական թվերի համար:

Թույլատրելի են թվային արժեքների ներկայացման հետեւյալ ձեւաչափերը՝

047	47	47.0	47.05	47
-----	----	------	-------	----

Ամսաթիվը դրվում է <տարի>--<ամիս>--<օր> եղանակով, որտեղ <օրը> ամսաթվի օրվա համարին համապատասխանող 2 թվանշաններ են, <ամիսը>՝ տարվա ամսվա համարին համապատասխանող 2 թվանշանները, <տարին>՝ տարվա 4 թվանշանները:

Տրամաբանականն ընդունում է հետեւյալ երկու արժեքներից մեկը՝ true կամ false:

Ծածկագիրը սահմանվում է որպես բառերի որոշակի բազմություններում հանդիպող բառ (ցանկացած պայմանանշանների հաջորդականություն՝ ներառյալ բացատները եւ կետադրության նշանները)¹: Ծածկագրի համեմատությունը համապատասխան բազմության բառերի հետ կատարվում է առանց հաշվի առնելու գրանցամատյանը:

«Ատրիբուտի անվանումը» սյունակում նշվում է հաղորդագրությունը փոխանցելիս օգտագործվող՝ ատրիբուտի կրճատված պայմանական անվանումը:

«Ատրիբուտի կառուցվածքը եւ լրացուցիչ տեղեկատվությունը» սյունակում նշվում է համապատասխան ատրիբուտի մասին լրացուցիչ տեղեկատվությունը (օրինակ՝ եթե ատրիբուտը տվյալ ձեւաչափի շրջանակներում ունի հնարավոր

¹ Օրինակ՝ տեղեկագրքում:

արժեքների սահմանափակ քանակ, ապա նշվում է այդ արժեքների ցանկը):

2. Հայտերի ռեեստրի նիշքի ձեռագրի նկարագրությունը:

2.1. Ընդհանուր դրույթներ.

Հայտերի ռեեստրի նիշքն ունի խիստ սահմանված ձևի անվանում եւ ներառում է ծառայողական ու տեղեկատվական մասերը: Ծառայողական մասը (Add_Info) պարունակում է հայտերի ռեեստրի նիշքի վերաբերյալ ընդհանուր տեղեկությունները (Common_Info) եւ հաղորդագրություն ուղարկողի մասին տվյալները (Sender_Info): Հայտերի ռեեստրի նիշքի տեղեկատվական մասը բաղկացած է երկու առանձին տարրերից՝

ապրանքների ներմուծման եւ անուղղակի հարկերի վճարման մասին հայտերի ռեեստր (Registry_Documents).

ապրանքների ներմուծման եւ անուղղակի հարկերի վճարման մասին հայտերի հետկանչի ռեեստր (Revoked_Documents):

2.2. Ծանուցումների ռեեստրի նիշքի անվանման կառուցվածքը:

Փոխանցման համար տվյալներ պարունակող նիշքերն ունեն հետեւյալ ձեւի անվանումներ՝

KSGGGGSSSRRRNNNN.XML,

որտեղ՝

KS-ն փոխանցվող տեղեկատվության նախաձանցն է (անուղղակի հարկեր).

GGGG-ն՝ ընթացիկ տարին.

SSS-ն՝ տեղեկատվություն փոխանցող երկրի թվային ծածկագիրը՝ ըստ Աշխարհի երկրների համառուսական դասակարգչի (ԱԵՀԴ)².

² Անդամ պետությունների ԱԵՀԴ-ի ծածկագրերը՝

051՝ Հայաստանի Հանրապետություն.

112՝ Բելառուսի Հանրապետություն.

398՝ Ղազախստանի Հանրապետություն.


RRR-ն՝ տեղեկատվություն ստացող երկրի թվային ծածկագիրը՝ ըստ Աշխարհի երկրների համառուսական դասակարգչի (ԱԵՀԴ)։

NNN-ն՝ ընթացիկ տարում հայտերի ռեեստրի նիշքի համարը։

Օրինակ՝ KS2009112398111.XML, KS2009398112107.XML,
KS2009643398403.XML, KS2015398051101.XML, KS2015051398131.XML:

2.3. Հայտերի ռեեստրի նիշքի սխեման։

Հայտերի ռեեստրի նիշքի՝ գրաֆիկական տեսքով (դիագրամ) սխեման ներկայացված է 2.3.1 նկարում։ Սխեմայի կառուցվածքային տարրերի կազմը եւ նկարագրությունը ներկայացված են սույն փաստաթղթի 2.4 եւ 2.5 բաժիններում։



Նկար 2.3.1. Հայտերի ռեեստրի նիշքի սխեման:

Նշված սխեմայի տարրերի կառուցվածքը բերված է սույն փաստաթղթի
2.6 բաժնի հետևյալ աղյուսակներում՝

Բլոկի անվանումը	Բլոկի նկարագրությանը աղյուսակի համարը
Ծառայողական մասը	
<հայտերի ռեեստրի նիշքի վերաբերյալ տեղեկությունները>	Աղյուսակ 2.6.1.1.
<հայտերի ռեեստրի նիշքն ուղարկողի մասին տեղեկությունները>	Աղյուսակ 2.6.1.2.
Տեղեկատվական մասը	
<հայտի վերաբերյալ տեղեկությունները>	Աղյուսակ 2.6.2.1.
<հայտի 3-րդ բաժնի վավերապայմանների վերաբերյալ տեղեկությունները>	Աղյուսակ 2.6.2.2.
<հայտի 3-րդ բաժնից կոնտրակտների մասնագրերի վավերապայմանների վերաբերյալ տեղեկությունները>	Աղյուսակ 2.6.2.3.
<հայտի 05-րդ տողից կոնտրակտների մասնագրերի վավերապայմանների վերաբերյալ տեղեկությունները>	Աղյուսակ 2.6.2.4.
<հայտի 07-րդ տողից կոնտրակտների մասնագրերի վավերապայմանների վերաբերյալ տեղեկությունները>	Աղյուսակ 2.6.2.5.
<ապրանքների եւ վճարված հարկերի վերաբերյալ տեղեկությունները>	Աղյուսակ 2.6.2.6.
<տրանսպորտային (ապրանքաուղեկից) փաստաթղթերի վերաբերյալ տեղեկությունները>	Աղյուսակ 2.6.2.7.
<հայտի հավելվածի պայմանագրերի (կոնտրակտների) վերաբերյալ տեղեկությունները>	Աղյուսակ 2.6.2.8.
<հայտի հավելվածից կոնտրակտների մասնագրերի վավերապայմանների վերաբերյալ տեղեկությունները>	Աղյուսակ 2.6.2.9.
<նախկինում ներկայացված այն հայտի վերաբերյալ տեղեկությունները, որի մասով գինը բարձրացել է>	Աղյուսակ 2.6.2.10.
<հայտը հետ կանչելու վերաբերյալ տեղեկությունները>	Աղյուսակ 2.6.2.11.

Հայտերի ռեեստրի նիշքի XSD սխեման բերված է սույն փաստաթղթի թիվ 1 հավելվածում:

2.4. Հայտերի ռեեստրի նիշքի ծառայողական մասի նկարագրությունը:

Հայտերի ռեեստրի նիշքի ծառայողական մասը պարունակվում է Add_Info տարրում, որը ներառում է երկու ենթատարրեր՝ Common_Info եւ Sender_Info:

2.4.1. Հայտերի ռեեստրի նիշքի վերաբերյալ տեղեկություններ պարունակող Common_Info ենթատարրի նկարագրությունը:

2.4.1.1. «Նիշքի նույնականացուցիչը» ատրիբուտը պարտադիր է եւ թույլ է տալիս յուրաքանչյուր նիշքի եզակի ծածկագիր շնորհել ու նույնականացնել հաղորդագրություն ուղարկողին:

Նիշքի նույնականացուցիչն ունի հետեւյալ կառուցվածքը՝

SSSRRRGGGGMMDDHHTTCC, որտեղ՝

SSS-ն ԱԵՀԴ-ի տեղեկագրքին համապատասխան՝ հաղորդագրություն ուղարկող երկրի թվային ծածկագիրն է.

RRR-ն՝ ԱԵՀԴ-ի տեղեկագրքին համապատասխան՝ հաղորդագրություն ստացող երկրի թվային ծածկագիրը.

GGGG-ն՝ նիշքի ձեւավորման տարին.

MM-ն՝ նիշքի ձեւավորման ամիսը.

DD-ն՝ նիշքի ձեւավորման օրը.

HH-ն՝ նիշքի ձեւավորման ժամը.

TT-ն՝ նիշքի ձեւավորման րոպեն.

CC-ն՝ նիշքի ձեւավորման վայրկյանը:

Օրինակ՝ 11239820090620152130, 64339820090610132310, 39864320090611141020.

2.4.1.2. «Տեղեկատվության տեսակը» ատրիբուտը պարտադիր է եւ թույլ է տալիս սահմանել փոխանցվող նիշքում տեղեկատվության տեսակը: Ունի ֆիքսված արժեք՝ TC:

2.4.1.3. «Նիշքի ձեւաչափի տարբերակը» ատրիբուտը պարտադիր է եւ սահմանում է նիշքի ձեւաչափի տարբերակը:

2.4.1.4. «Նիշքում փաստաթղթերի քանակը» ատրիբուտը պարտադիր է եւ սահմանում է փոխանցվող նիշքում փաստաթղթերի (հայտերի եւ հետկանչերի) քանակը: Նիշքում հայտագրված փաստաթղթերի քանակի անհամապատասխանությունն իրական քանակին՝ նիշքի ձեւաչափի խախտում է:

2.4.2. Հայտերի ռեեստրի նիշքն ուղարկողի մասին տեղեկություններ պարունակող Sender_Info ենթատարրի նկարագրությունը:

2.4.2.1. «Ուղարկողի ազգանունը» ատրիբուտը պարտադիր է եւ սահմանում է փոխանցման համար նիշքը նախապատրաստած՝ պատասխանատու անձի ազգանունը: Տարրերի արժեքները կարող են պարունակել բացատներ եւ զծիկ:

2.4.2.2. «Ուղարկողի անունը» ատրիբուտը պարտադիր է եւ սահմանում է փոխանցման համար նիշքը նախապատրաստած՝ պատասխանատու անձի անունը: Տարրերի արժեքները կարող են պարունակել բացատներ եւ զծիկ:

2.4.2.3. «Ուղարկողի հայրանունը» ատրիբուտը պարտադիր չէ եւ սահմանում է փոխանցման համար նիշքը նախապատրաստած՝ պատասխանատու անձի հայրանունը: Տարրերի արժեքները կարող են պարունակել բացատներ եւ զծիկ:

2.4.2.4. «Ուղարկողի հեռախոսահամարը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հաղորդագրություն ուղարկողի կոնտակտային հեռախոսահամարը: Լրացվում է ազատ ձեւաչափով:

2.4.2.5. «Ուղարկողի էլեկտրոնային հասցեն» ատրիբուտը պարտադիր չէ եւ նշում է ուղարկողի էլեկտրոնային փոստի հասցեն:

2.5. Հայտերի ռեեստրի նիշքի տեղեկատվական մասի նկարագրությունը:

Հայտերի ռեեստրի նիշքի տեղեկատվական մասը բաղկացած է երկու առանձին տարրերից՝ Registry_Documents (հայտերի ռեեստր) եւ Revoked_Documents (հայտերի հետկանչի ռեեստր):

Registry_Documents տարրը պարունակում է Registry_Document ցանկում ընդգրկված ենթատարր, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է տեղեկություններ՝ առանձին հայտի մասով:

Revoked_Documents տարրը պարունակում է Revoked_Document ցանկում ընդգրկված ենթատարրը, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է տեղեկություններ՝ հայտի առանձին հետկանչի մասով:

2.5.1. Հայտի վերաբերյալ տեղեկություններ պարունակող Registry_Document տարրի նկարագրությունը:

Registry_Document տարրը պարտադիր համալիր տարր է, որը ներառում է սեփական ատրիբուտներ եւ հետեւյալ ենթատարրերը՝

sect_3 ենթատարր, որը նախատեսված է հայտի 3-րդ բաժնից տեղեկատվություն փոխանցելու համար.

spec_05, spec_07 ենթատարրեր, որոնք նախատեսված են հայտի 1-ին բաժնից՝ կոնտրակտների մասնագրերի վավերապայմանները փոխանցելու համար.

commodity ենթատարր, որը նախատեսված է ապրանքների եւ վճարված հարկերի գումարների վերաբերյալ տեղեկություններ փոխանցելու համար.

contract ենթատարր, որը նախատեսված է հայտի հավելվածից տեղեկատվություն փոխանցելու համար.

price_increasing ենթատարր, որը նախատեսված է նախկինում ներկայացված այն հայտի մասին տեղեկատվություն փոխանցելու համար, որի մասով գինը բարձրացել է:

2.5.1.1. Registry_Document տարրի ատրիբուտի նկարագրությունը:

2.5.1.2. «Փաստաթղթի նույնականացուցիչը» ծառայողական ատրիբուտը պարտադիր է եւ թույլ է տալիս յուրաքանչյուր փաստաթղթի եզակի ծածկագիր շնորհել ու նույնականացնել դրա աղբյուրը:

Փաստաթղթի նույնականացուցիչն ունի հետեւյալ կառուցվածքը՝

IIIIIIIIIIIIIIIIIIIIIISSGGGNNNNNNNN, որտեղ՝

IIIIIIIIIIIIIIIIIIIIIIIIIIIIIIIIIIII-ն 18-կարգանի ծածկագրով ներկայացված՝ փաստաթուղթը ձեւավորած ուղարկողի (տարածքային հարկային մարմնի) նույնականացուցիչն է.

SSS-ն՝ փաստաթուղթը ձեւավորած հարկային մարմնի երկրի (փաստաթուղթ ուղարկող երկիր) թվային ծածկագիրը.

GGGG-ն՝ ընթացիկ տարին.

NNNNNNNN-ն՝ ընթացիկ տարում փաստաթղթի հերթական համարը:

Համարակալումը կատարվում է յուրաքանչյուր տարածքային հարկային մարմնի կողմից:

Փաստաթուղթը ձեւավորած ուղարկողի (տարածքային հարկային մարմնի) նույնականացուցիչը բաղկացած է փաստաթուղթը ձեւավորած տարածքային հարկային մարմնի ծածկագրից՝ ըստ հայտն ուղարկող երկրի հարկային մարմինների համապատասխան տեղեկագրքի՝ մինչեւ 18-րդ կարգը լրացված «*» պահուստային պայմանանշաններով: Օրինակ՝

222*****398200900000037,

6201*****643200900000012,

7707*****112200900000020,

71*****051201500000019,

012*****417201500000011:

Ըստ ձեռք բերված համաձայնության՝ «*» պահուստային պայմանանշանները կարող են օգտագործվել հարկային մարմինների կողմից՝ սեփական հայեցողությամբ:

2.5.1.1.2. «Փաստաթղթի ձեւավորման ամսաթիվը» ծառայողական ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է էլեկտրոնային ձեւով փաստաթղթի ձեւավորման ամսաթիվը:

2.5.1.1.3. «Փաստաթղթի առաջացման պատճառը» ծառայողական ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է փաստաթղթի առաջացման պատճառի ծածկագիրը՝ Փաստաթղթի առաջացման պատճառի (ՓԱՊ) տեղեկագրքին համապատասխան:

2.5.1.1.4. «Փաստաթղթի տեսակը» ծառայողական ատրիբուտը պարտադիր է եւ ընդունում է հետեւյալ արժեքները՝ 0՝ այն դեպքում, երբ փաստաթուղթն ուղարկվում է ընդհանուր սահմանված կարգով, 1՝ այն դեպքում, երբ փաստաթուղթն ուղարկվում է ի պատասխան հարցմանը (2.1 տարբերակից չի գործածվում), 2՝ այն դեպքում, երբ փաստաթուղթն ուղարկվում է ի գիտություն:

2.5.1.1.5. «Հարցման նույնականացուցիչը» ծառայողական ատրիբուտը պարտադիր չէ եւ պարունակում է հարցման նույնականացուցիչ՝ էլեկտրոնային ձեւով: Լրացվում է այն դեպքում, երբ հայտը հարցման պատասխան է («Փաստաթղթի տեսակը» ատրիբուտում նշված է «1» արժեքը՝ 2.1 տարբերակից չի գործածվում):

2.5.1.1.6. «Հարկ վճարողի կողմից նշված՝ հայտի համարը» ատրիբուտը պարտադիր ատրիբուտ չէ եւ պարունակում է հարկ վճարողի կողմից հայտի 1-ին բաժնում նշված հայտի համարը: Պարտադիր է հարկային մարմնում հայտի գրանցման մասին նշման ամսաթվի՝ 01.01.2015-ից ուշ կամ հավասար լինելու դեպքում:

2.5.1.1.7. «Հարկ վճարողի կողմից նշված՝ հայտի ամսաթիվը» ատրիբուտը պարտադիր ատրիբուտ չէ եւ պարունակում է հարկ վճարողի կողմից հայտի 1-ին բաժնում նշված հայտի ամսաթիվը: Պարտադիր է հարկային մարմնում հայտի գրանցման մասին նշման ամսաթվի՝ 01.01.2015-ից ուշ կամ հավասար լինելու դեպքում:

2.5.1.1.8. «Վաճառողի նույնականացման ծածկագիրը (համարը)³» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 1-ին բաժնում նշված՝ ապրանքը վաճառողի նույնականացման ծածկագիրը (համարը):

2.5.1.1.9. «Վաճառող — ֆիզիկական անձի հատկանիշը» ատրիբուտը պարտադիր է եւ ընդունում է հետեւյալ արժեքները՝ true՝ այն դեպքում, երբ հայտի 1-ին բաժնում նշված վաճառողը ֆիզիկական անձ է (ոչ անհատ ձեռնարկատեր), false՝ այն դեպքում, երբ հայտի 1-ին բաժնում նշված վաճառողը իրավաբանական անձ է կամ անհատ ձեռնարկատեր.

2.5.1.1.10. «Վաճառողի անվանումը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 1-ին բաժնի 01 տողում նշված՝ վաճառողի անվանումը (կազմակերպության լրիվ անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ Ա.Ա.Հ.-ն, ֆիզիկական անձի Ա.Ա.Հ.-ն):

2.5.1.1.11. «Վաճառողի երկրի ծածկագիրը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 03 տողում նշված՝ հարկ վճարողի երկրի ծածկագիրը՝ ըստ ԱԵՀԴ-ի:

2.5.1.1.12. «Գնորդի նույնականացման ծածկագիրը (համարը)» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 1-ին բաժնում նշված՝ ապրանքի գնորդի նույնականացման ծածկագիրը (համարը):

³ Անդամ պետությունների հարկ վճարողների նույնականացման ծածկագրերը (համարները)՝ Հայաստանի Հանրապետություն՝ հարկ վճարողի հաշվառման համարը՝ 8-կարգանի թվային ծածկագիր.

Բելառուսի Հանրապետություն՝ վճարողի հաշվառման համարը (ՎՀՀ)՝ 9-կարգանի թվային ծածկագիր՝ իրավաբանական անձանց համար, 9-կարգանի տառաթվային ծածկագիր՝ ֆիզիկական անձանց համար.

Ղազախստանի Հանրապետություն՝ 12-կարգանի թվային ծածկագիր՝ բիզնես-նույնականացման համարը (ԲՆՀ)՝ իրավաբանական անձանց համար, անհատական նույնականացման համարը (ԱՆՀ)՝ ֆիզիկական անձանց համար.

Ղրղզստանի Հանրապետություն՝ հարկ վճարողի նույնականացման հարկային համարը (ՀՎՆՀՀ)՝ 14-կարգանի թվային ծածկագիր.

Ռուսաստանի Դաշնություն՝ հարկ վճարողի նույնականացման համարը (ՀՎՆՀ)՝ 10-կարգանի թվային ծածկագիր՝ իրավաբանական անձանց համար, 12-կարգանի տառաթվային ծածկագիր՝ ֆիզիկական անձանց համար:

2.5.1.1.13. «Գնորդի անվանումը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 1-ին բաժնի 02 տողում նշված՝ գնորդի անվանումը (կազմակերպության լրիվ անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ Ա.Ա.Հ.-ն):

2.5.1.1.14. «Գնորդի երկրի ծածկագիրը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 1-ին բաժնի 04 տողում նշված՝ գնորդի երկրի թվային ծածկագիրը՝ ըստ ԱԵՀԴ-ի:

2.5.1.1.15. «1-ին պայմանագրի (կոնտրակտի) համարը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 1-ին բաժնի 05 տողում նշված՝ պայմանագրի (կոնտրակտի) համարը:

2.5.1.1.16. «1-ին պայմանագրի (կոնտրակտի) ամսաթիվը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 1-ին բաժնի 05 տողում նշված՝ պայմանագրի (կոնտրակտի) ամսաթիվը:

2.5.1.1.17. «Կոմիսիոների, հանձնակատարի կամ գործակալի անվանումը» ատրիբուտը պարտադիր չէ եւ պարունակում է հայտի 1-ին բաժնի 06 տողում նշված՝ կոմիսիոների, հանձնակատարի կամ գործակալի անվանումը (կազմակերպության լրիվ անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ Ա.Ա.Հ.-ն):

2.5.1.1.18. «2-րդ պայմանագրի (կոնտրակտի) համարը» ատրիբուտը պարտադիր չէ եւ պարունակում է հայտի 1-ին բաժնի 07 տողում նշված՝ պայմանագրի (կոնտրակտի) համարը:

2.5.1.1.19. «2-րդ պայմանագրի (կոնտրակտի) ամսաթիվը» ատրիբուտը պարտադիր չէ եւ պարունակում է հայտի 1-ին բաժնի 07 տողում նշված՝ պայմանագրի (կոնտրակտի) ամսաթիվը:

2.5.1.1.20. «Լիզինգի պայմանագրի հատկանիշը» ատրիբուտը պարտադիր է եւ ընդունում է հետեւյալ արժեքները՝ false՝ այն դեպքում, երբ լիզինգի պայմանագրի հատկանիշը հայտի թղթային ձեւի վրա բացակայում է. true՝ այն դեպքում, երբ լիզինգի պայմանագրի հատկանիշը հայտի թղթային ձեւի վրա նշված է:

2.5.1.1.21. «Պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակման պայմանագրի հատկանիշը» ատրիբուտը պարտադիր է եւ ընդունում է հետեւյալ արժեքները՝ false՝ այն դեպքում, երբ պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակման պայմանագրի հատկանիշը հայտի թղթային ձեւի վրա բացակայում է. true՝ այն դեպքում, երբ պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակման պայմանագրի հատկանիշը հայտի թղթային ձեւի վրա նշված է.

2.5.1.1.22. «Հայտը ստորագրածի Ա.Ա.Հ.-ն» ատրիբուտը պարտադիր չէ եւ պարունակում է հայտի 1-ին բաժնում նշված՝ հայտը ստորագրած գնորդ կազմակերպության ղեկավարի, անհատ ձեռնարկատիրոջ կամ լիազորված անձի Ա.Ա.Հ.-ն:

2.5.1.1.23. «Հարկային մարմնում հայտի գրանցման մասին նշման համարը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 2-րդ բաժնում նշված՝ հարկային մարմնում հայտի գրանցման մասին նշման համարը:

2.5.1.1.24. «Հարկային մարմնում հայտի գրանցման մասին նշման ամսաթիվը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 2-րդ բաժնում նշված՝ հարկային մարմնում հայտի գրանցման մասին նշման ամսաթիվը:

2.5.1.1.25. «ԱԱՀ-ի գումարը (վճարված է)» ատրիբուտը պարտադիր չէ եւ պարունակում է հայտի 2-րդ բաժնում նշված՝ հարկային մարմնի նշման համաձայն վճարված ավելացված արժեքի հարկի գումարը:

2.5.1.1.26. «Ակցիզների գումարը (վճարված են)» ատրիբուտը պարտադիր չէ եւ պարունակում է հայտի 2-րդ բաժնում նշված՝ հարկային մարմնի նշման համաձայն վճարված ակցիզների գումարը:

2.5.1.1.27. «Ակցիզների հարկային բազա (ընդամենը)» ատրիբուտը պարտադիր չէ եւ պարունակում է ակցիզների հարկային բազայի գումարը՝ ըստ ապրանքային տողերի:

2.5.1.1.28. «ԱԱՀ-ի հարկային բազան (ընդամենը)» ատրիբուտը պարտադիր չէ եւ պարունակում է ԱԱՀ-ի հարկային բազայի գումարը՝ ըստ ապրանքային

տողերի: Պարտադիր է հարկային մարմնում հայտի գրանցման մասին նշման ամսաթվի՝ 01.01.2015-ից ուշ կամ հավասար լինելու դեպքում:

2.5.1.1.29. «Ակցիզների հարկերի գումարը (ընդամենը)» ատրիբուտը պարտադիր չէ եւ պարունակում է ակցիզների հարկերի՝ ըստ ապրանքային տողերի մինչեւ ամբողջական միավորներ կլորացված գումարը (մաթեմատիկական կանոն).

2.5.1.1.30. «ԱԱՀ-ի հարկերի գումարը (ընդամենը)» ատրիբուտը պարտադիր չէ եւ պարունակում է ԱԱՀ-ի հարկերի՝ ըստ ապրանքային տողերի մինչեւ ամբողջական միավորներ կլորացված գումարը (մաթեմատիկական կանոն): Պարտադիր է հարկային մարմնում հայտի գրանցման մասին նշման ամսաթվի՝ 01.01.2015-ից ուշ կամ հավասար լինելու դեպքում:

2.5.1.1.31. «Տեսուչի Ա.ԱՀ.-ն» ատրիբուտը պարտադիր ատրիբուտ չէ եւ պարունակում է հայտի 2-րդ բաժնում նշված՝ հայտն ստուգած եւ անուղղակի հարկերի վճարման (ԱԱՀ-ի եւ (կամ) ակցիզների հարկումից ազատման) մասին նշումը դրած տեսուչի Ա.ԱՀ.-ն: Պարտադիր է հարկային մարմնում հայտի գրանցման մասին նշման ամսաթվի՝ 01.01.2015-ից ուշ կամ հավասար լինելու դեպքում:

2.5.1.1.32. «Հարկերի վճարման մասին հարկային մարմնի նշման ամսաթիվը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 2-րդ բաժնում նշված՝ հարկերի վճարման մասին հարկային մարմնի նշման ամսաթիվը:

2.5.1.1.33. «Հարկային մարմնի անվանումը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 2-րդ բաժնում նշված՝ հարկային մարմնի անվանումը:

2.5.1.1.34. «Հայտի ներկայացման եղանակը» ատրիբուտը պարտադիր է եւ ընդունում է հետեւյալ արժեքները՝ 1՝ այն դեպքում, երբ հայտը ներկայացված է թղթային կրիչով եւ էլեկտրոնային ձեւով. 2՝ այն դեպքում, երբ հայտը ներկայացված է միայն էլեկտրոնային ձեւով՝ էլեկտրոնային (էլեկտրոնային-թվային) ստորագրությամբ:

2.5.1.1.35. «Հետ կանչված հայտի նույնականացուցիչը» ատրիբուտը պարտադիր ատրիբուտ չէ եւ պարունակում է հետ կանչված հայտի նույնականացուցիչն այն դեպքում, երբ փոխանակման որեւէ մեթոդի միջոցով կատարվել է հայտի հետկանչ:

2.5.1.1.36. «Հետ կանչված հայտը հարկային մարմնում գրանցելու վերաբերյալ նշման համարը» ատրիբուտը պարտադիր ատրիբուտ չէ եւ պարունակում է հետ կանչված հայտի 2-րդ բաժնում նշված՝ հետ կանչված հայտը հարկային մարմնում գրանցելու վերաբերյալ նշման համարը: Լրացվում է փոխանակման որեւէ մեթոդի միջոցով հայտի հետկանչի դեպքում:

2.5.1.1.37. «Հետ կանչված հայտը հարկային մարմնում գրանցելու վերաբերյալ նշման ամսաթիվը» ատրիբուտը պարտադիր ատրիբուտ չէ եւ պարունակում է հետ կանչված հայտի 2-րդ բաժնում նշված՝ հետ կանչված հայտը հարկային մարմնում գրանցելու վերաբերյալ նշման ամսաթիվը: Լրացվում է փոխանակման որեւէ մեթոդի միջոցով հայտի հետկանչի դեպքում:

2.5.1.1.38. «Նախորդ հայտը հարկային մարմնում գրանցելու վերաբերյալ նշման համարը» ատրիբուտը պարտադիր ատրիբուտ չէ եւ պարունակում է հարկ վճարողի կողմից նշված՝ նախորդ հայտը հարկային մարմնում գրանցելու վերաբերյալ նշման համարը: Պարտադիր է այն դեպքում, երբ Փաստաթղթի առաջացման պատճառը = 4-ի կամ 6-ի:

2.5.1.1.39. «Նախորդ հայտը հարկային մարմնում գրանցելու վերաբերյալ նշման ամսաթիվը» ատրիբուտը պարտադիր ատրիբուտ չէ եւ պարունակում է հարկ վճարողի կողմից նշված՝ նախորդ հայտը հարկային մարմնում գրանցելու վերաբերյալ նշման ամսաթիվը: Պարտադիր է այն դեպքում, երբ Փաստաթղթի առաջացման պատճառը = 4-ի կամ 6-ի:

2.5.1.1.40. «Ծանոթագրություն» ատրիբուտը պարտադիր ատրիբուտ չէ եւ պարունակում է հայտի վերաբերյալ լրացուցիչ տեքստային տեղեկատվություն:

2.5.1.2. Հայտի 3-րդ բաժնից տեղեկություններ պարունակող Sect _3 տարրի նկարագրությունը:

Sect_3 տարրը ոչ պարտադիր համալիր տարր է, որը ներառում է սեփական ատրիբուտներ եւ spec_3 ենթատարրը, որը նախատեսված է հայտի 3-րդ բաժնից կոնտրակտների մասնագրերի վավերապայմանների մասին տեղեկությունների փոխանցման համար:

2.5.1.2.1. Sect_3 տարրի ատրիբուտների նկարագրությունը:

2.5.1.2.1.1. «Վաճառողի տեսակը» ատրիբուտը պարտադիր չէ եւ նախատեսված է վաճառողի տեսակի փոխանցման համար: Կարող է ընդունել հետեւյալ արժեքները՝ 6 (վաճառող), 0 (կոմիտենտ), 1 (հանձնարարող), 2 (պրինցիպալ): Պարտադիր է հարկային մարմնում հայտի գրանցման մասին նշման ամսաթվի՝ 01.01.2015-ից ուշ կամ հավասար լինելու դեպքում:

2.5.1.2.1.2. «Վաճառողի, կոմիտենտի, հանձնարարողի, պրինցիպալի նույնականացման ծածկագիրը (համարը)» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 3-րդ բաժնում նշված՝ վաճառողի, կոմիտենտի, հանձնարարողի, պրինցիպալի նույնականացման ծածկագիրը (համարը):

2.5.1.2.1.3. «Վաճառողի, կոմիտենտի, հանձնարարողի, պրինցիպալի անվանումը» ատրիբուտը պարտադիր է եւ ընդունում է հայտի 3-րդ բաժնի 08 տողում նշված՝ վաճառողի, կոմիտենտի, հանձնարարողի, պրինցիպալի անվանման արժեքը (կազմակերպության լրիվ անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ Ա.Ա.<.-ն):

2.5.1.2.1.4. «Վաճառողի, կոմիտենտի, հանձնարարողի, պրինցիպալի երկրի ծածկագիրը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 3-րդ բաժնի 10 տողում նշված՝ հարկ վճարողի երկրի թվային ծածկագիրը՝ ըստ ԱԵՀԴ-ի:

2.5.1.2.1.5. «Գնորդի տեսակը» ատրիբուտը պարտադիր չէ եւ նախատեսված է գնորդի տեսակի փոխանցման համար: Կարող է ընդունել հետեւյալ արժեքները՝ 7 (գնորդ), 3 (կոմիսիոներ), 4 (հանձնակատար), 5 (գործակալ): Պարտադիր է հարկային մարմնում հայտի գրանցման մասին նշման ամսաթվի՝ 01.01.2015-ից ուշ կամ հավասար լինելու դեպքում:

2.5.1.2.1.6. «Գնորդի, կոմիսիոնների, հանձնակատարի, գործակալի նույնականացման ծածկագիրը (համարը)» ատրիբուտը պարտադիր չէ եւ պարունակում է հայտի 3-րդ բաժնում նշված՝ գնորդի, կոմիսիոնների, հանձնակատարի, գործակալի նույնականացման ծածկագիրը (համարը):

2.5.1.2.1.7. «Գնորդի, կոմիսիոնների, հանձնակատարի, գործակալի անվանումը» ատրիբուտը պարտադիր է եւ ընդունում է հայտի 3-րդ բաժնի 09 տողում նշված՝ գնորդի, կոմիսիոնների, հանձնակատարի, գործակալի անվանման արժեքը (կազմակերպության լրիվ անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ Ա.Ա.Հ.-ն):

2.5.1.2.1.8. «Գնորդի, կոմիսիոնների, հանձնակատարի, գործակալի երկրի ծածկագիրը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 3-րդ բաժնի 11-րդ տողում նշված՝ գնորդ — հարկ վճարողի երկրի թվային ծածկագիրը՝ ըստ ԱԵՀԴ-ի:

2.5.1.2.1.9. «3-րդ բաժնի պայմանագրի (կոնտրակտի) համարը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 3-րդ բաժնում նշված՝ պայմանագրի (կոնտրակտի) համարը:

2.5.1.2.1.10.«3-րդ բաժնի պայմանագրի (կոնտրակտի) ամսաթիվը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 3-րդ բաժնում նշված՝ պայմանագրի (կոնտրակտի) ամսաթիվը:

2.5.1.2.2. Spec_3 ենթատարրի նկարագրությունը:

Spec_3 տարրը պարտադիր չէ եւ պարունակում է հայտի 3-րդ բաժնից՝ կոնտրակտների մասնագրերի վավերապայմանների մասին ցանկում ընդգրկված տեղեկությունները:

2.5.1.2.2.1. «Մասնագրի հերթական համարը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 3-րդ բաժնից՝ կոնտրակտի մասնագրերի վավերապայմանների ցանկում մասնագրի հերթական համարը:

2.5.1.2.2.2. «Մասնագրի համարը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 3-րդ բաժնում նշված՝ պայմանագրի (կոնտրակտի) մասնագրի համարը:

2.5.1.2.2.3. «Մասնագրի ամսաթիվը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 3-րդ բաժնում նշված՝ պայմանագրի (կոնտրակտի) մասնագրի ամսաթիվը:

2.5.1.3. Spec_05 ենթատարրի նկարագրությունը:

Spec_05 տարրը պարտադիր չէ եւ պարունակում է հայտի 05 տողից՝ կոնտրակտների մասնագրերի վավերապայմանների վերաբերյալ ցանկում ընդգրկված տեղեկությունները: Spec_05-ի քանակը չպետք է գերազանցի 1000 (հազար) տարրը:

2.5.1.3.1. «Մասնագրի հերթական համարը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 1-ին բաժնի 05 տողից՝ կոնտրակտի մասնագրերի վավերապայմանների ցանկում մասնագրի հերթական համարը:

2.5.1.3.2. «Մասնագրի համարը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 1-ին բաժնի 05 տողում նշված՝ պայմանագրի (կոնտրակտի) մասնագրի համարը:

2.5.1.3.3. «Մասնագրի ամսաթիվը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 1-ին բաժնի 05 տողում նշված՝ պայմանագրի (կոնտրակտի) մասնագրի ամսաթիվը:

2.5.1.4. Spec_07 ենթատարրի նկարագրությունը.

Spec_07 տարրը պարտադիր չէ եւ պարունակում է հայտի 07 տողից՝ կոնտրակտների մասնագրերի վավերապայմանների վերաբերյալ ցանկում ընդգրկված տեղեկությունները: Spec_07-ի քանակը չպետք է գերազանցի 1000 (հազար) տարրը:

2.5.1.4.1. «Մասնագրի հերթական համարը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 1-ին բաժնի 07 տողից՝ կոնտրակտի մասնագրերի վավերապայմանների ցանկում մասնագրի հերթական համարը:

2.5.1.4.2. «Մասնագրի համարը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է

հայտի 1-ին բաժնի 07 տողում նշված՝ պայմանագրի (կոնտրակտի) մասնագրի համարը:

2.5.1.4.3. «Մասնագրի ամսաթիվը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 1-ին բաժնի 07 տողում նշված՝ պայմանագրի (կոնտրակտի) մասնագրի ամսաթիվը:

2.5.1.5. Ապրանքների եւ վճարված հարկերի վերաբերյալ տեղեկություններ պարունակող Commodity ենթատարրի նկարագրությունը:

Commodity ենթատարրը պարտադիր համալիր տարր է, որը ներառում է ապրանքների վերաբերյալ տեղեկություններն արտացոլելու համար սեփական ատրիբուտներ եւ transdocs ենթատարր, որը նախատեսված է ապրանքների վերաբերյալ տեղեկությունների յուրաքանչյուր տողի մասով՝ տրանսպորտային (ապրանքաուղեկից) փաստաթղթերի մասին տեղեկատվություն փոխանցելու համար:

2.5.1.5.1. Commodity տարրի ատրիբուտների նկարագրությունը:

2.5.1.5.1.1. «Փաստաթղթում ապրանքի համարը՝ ըստ կարգի» ծառայողական ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 1-ին սյունակում նշված՝ ապրանքի հերթական համարը:

2.5.1.5.1.2. «Ապրանքի անվանումը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 2-րդ սյունակում նշված անվանումը:

2.5.1.5.1.3. «Ապրանքի ԱՏԳ ԱԱ ծածկագիրը» ատրիբուտը պարտադիր չէ եւ պարունակում է հայտի 3-րդ սյունակում նշված՝ ապրանքի ծածկագիրը՝ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) համապատասխան:

2.5.1.5.1.4. «Ապրանքի չափման միավորը» ատրիբուտը պարտադիր չէ եւ պարունակում է հայտի 4-րդ սյունակում նշված՝ ապրանքի չափման միավորի անվանմանը համապատասխանող՝ ապրանքի չափման միավորի ծածկագիրը՝

ըստ Չափման միավորների համառուսական դասակարգչի (ՉՄՀԴ): Պարտադիր է հարկային մարմնում հայտի գրանցման մասին նշման ամսաթվի՝ 01.01.2015-ից ուշ կամ հավասար լինելու դեպքում: Չափման միավորների համառուսական դասակարգչում (ՉՄՀԴ) ապրանքի չափման միավորի ծածկագրի բացակայության դեպքում նշվում է FFFF արժեքը:

2.5.1.5.1.5. «Ապրանքի քանակը» ատրիբուտը պարտադիր չէ եւ պարունակում է հայտի 5-րդ սյունակում նշված՝ ապրանքի քանակը: Պարտադիր է հարկային մարմնում հայտի գրանցման մասին նշման ամսաթվի՝ 01.01.2015-ից ուշ կամ հավասար լինելու դեպքում:

2.5.1.5.1.6. «Ապրանքի (աշխատանքի) արժեքը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 6-րդ սյունակում նշված՝ ապրանքի արժեքը:

2.5.1.5.1.7. «Արժույթի ծածկագիրը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է այն հայտի 7-րդ սյունակից՝ արժույթի թվային ծածկագիրը՝ ըստ Արժույթների համառուսական դասակարգչի (ԱՀԴ), որտեղ հայտի 6-րդ սյունակում նշված է ապրանքի արժեքը:

2.5.1.5.1.8. «Արժույթի փոխարժեքը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է արժույթի փոխարժեքը՝ հայտի 8-րդ սյունակից:

2.5.1.5.1.9. «Հաշիվ-ապրանքագրի համարը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 11-րդ սյունակից՝ հաշիվ-ապրանքագրի համարի վերաբերյալ տեղեկությունները:

2.5.1.5.1.10. «Հաշիվ-ապրանքագրի ամսաթիվը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 12-րդ սյունակում նշված՝ հաշիվ-ապրանքագրի դուրսգրման ամսաթիվը:

2.5.1.5.1.11. «Ապրանքը հաշվառման ընդունելու ամսաթիվը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 13-րդ սյունակում նշված՝ ներմուծված ապրանքը հարկ վճարողի կողմից հաշվառման ընդունվելու ամսաթիվը.

2.5.1.5.1.12.«Հարկային բազա (ակցիզներ)» ատրիբուտը պարտադիր չէ եւ պարունակում է հայտի 14-րդ սյունակում նշված՝ ակցիզների մասով հարկային բազայի մեծությունը (գումարը՝ դրամային արտահայտությամբ կամ այն ապրանքների քանակը (ծավալը), որոնց նկատմամբ սահմանվել են ակցիզների հաստատագրված դրույքաչափեր):

2.5.1.5.1.13.«Հարկային բազա (ԱԱՀ)» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 15-րդ սյունակում նշված՝ ավելացված արժեքի հարկի մասով հարկային բազայի մեծությունը (գումարը՝ դրամային արտահայտությամբ):

2.5.1.5.1.14.«Հարկի դրույքաչափը (ակցիզներ)՝ հաստատագրված (յուրահատուկ)» ատրիբուտը պարտադիր չէ եւ պարունակում է հայտի 16-րդ սյունակում նշված՝ ազգային արժույթով վերահաշվարկված ակցիզների դրույքաչափերը: Ընդ որում, եթե ապրանքի (աշխատանքի, ծառայության) մասով կիրառվում են արտոնություններ, ապա «Հարկի դրույքաչափը (ակցիզներ)՝ հաստատագրված (յուրահատուկ)» ատրիբուտը տեղեկատվության փոխանակման ժամանակ լրացվում է «-1» արժեքով:

2.5.1.5.1.15.«Հարկի դրույքաչափը (ակցիզներ)՝ ադվալորային» ատրիբուտը պարտադիր չէ եւ պարունակում է ակցիզների՝ տոկոսներով նշված դրույքաչափը հայտի 17-րդ սյունակից: Ընդ որում, եթե ապրանքի (աշխատանքի, ծառայության) մասով կիրառվում են արտոնություններ, ապա «Հարկի դրույքաչափը (ակցիզներ)՝ ադվալորային» ատրիբուտը տեղեկատվության փոխանակման ժամանակ լրացվում է «-1» արժեքով:

2.5.1.5.1.16.«Հարկի դրույքաչափը (ԱԱՀ)» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 18-րդ սյունակում նշված՝ ավելացված արժեքի հարկի դրույքաչափը (տոկոսներով): Ընդ որում, եթե ապրանքի (աշխատանքի, ծառայության) մասով կիրառվում են արտոնություններ, ապա «Հարկի դրույքաչափը (ԱԱՀ)» ատրիբուտը տեղեկատվության փոխանակման ժամանակ լրացվում է «-1» արժեքով:

2.5.1.5.1.17.«Հարկի գումարը (ակցիզներ)» ատրիբուտը պարտադիր չէ եւ պարունակում է հայտի 19-րդ սյունակում նշված՝ ակցիզների գումարը (դրամային արտահայտությամբ):

2.5.1.5.1.18.«Հարկի գումարը (ԱԱՀ)» ատրիբուտը պարտադիր չէ եւ պարունակում է հայտի 20-րդ սյունակում նշված՝ ավելացված արժեքի հարկի գումարը (դրամային արտահայտությամբ):

2.5.1.5.2. Տրանսպորտային (ապրանքաուղեկից) փաստաթղթերի վերաբերյալ տեղեկություններ պարունակող՝ Transdocs ենթատարրի ատրիբուտի նկարագրությունը:

Transdocs տարրը պարտադիր է եւ պարունակում է հայտի 1-ին բաժնի ապրանքների ռեեստրի ապրանքային դիրքի յուրաքանչյուր տողի համար նշված՝ տրանսպորտային (ապրանքաուղեկից) փաստաթղթերի վավերապայմանների վերաբերյալ ցանկում ընդգրկված տեղեկությունները: Transdocs տարրերի քանակը սահմանափակված չէ:

2.5.1.5.2.1. «Տրանսպորտային (ապրանքաուղեկից) փաստաթղթի սերիան, համարը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 9-րդ սյունակից՝ տրանսպորտային (ապրանքաուղեկից) փաստաթղթի սերիայի եւ համարի մասին տեղեկատվությունը:

2.5.1.5.2.2. «Տրանսպորտային (ապրանքաուղեկից) փաստաթղթի ամսաթիվը» ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հայտի 10-րդ սյունակում նշված՝ տրանսպորտային (ապրանքաուղեկից) փաստաթղթի ամսաթիվը:

2.5.1.6. Հայտի հավելվածից՝ պայմանագրերի (կոնտրակտների) վերաբերյալ տեղեկություններ պարունակող՝ Contract ենթատարրի նկարագրությունը:

Contract տարրը ոչ պարտադիր համալիր տարր է, որը ներառում է սեփական ատրիբուտներ եւ spec_pril ենթատարր, որը նախատեսված է հայտի հավելվածից կոնտրակտների մասնագրերի վավերապայմանների մասին տեղեկատվության փոխանցման համար:

2.5.1.6.1. Commodity տարրի ատրիբուտների նկարագրությունը:

2.5.1.6.1.1. «Համարը՝ ըստ կարգի» ծառայողական ատրիբուտը պարտադիր է եւ պարունակում է հավելվածից այն սեգմենտի հերթական համարը, որը պարունակում է վաճառողի, գնորդի եւ պայմանագրի (կոնտրակտի) մասին տեղեկություններ:

2.5.1.6.1.2. «Վաճառողի տեսակը» ատրիբուտը պարտադիր չէ եւ նախատեսված է վաճառողի տեսակը նշելու համար: Կարող է ընդունել հետեւյալ արժեքները՝ 0 (Կոմիտենտ), 1 (Հանձնարարող), 2 (Պրինցիպալ), 3 (Կոմիսիոներ), 4 (Հանձնակատար), 5 (Գործակալ), 6 (Վաճառող), 7 (Գնորդ): Պարտադիր է հարկային մարմնում հայտի գրանցման մասին նշման ամսաթվի՝ 01.01.2015-ից ուշ կամ հավասար լինելու դեպքում:

